

Յ Ւ Ա Շ Ը

Փառիկ նովելլա Կ. Ռանգոլպ-Լիսչիլդի

—կանգնիր, Ռեգինալդ։ Ի՞նչպէս ես, ինչու այդպէս արագ վազում ես, —լոնդոնից հեռանալու մտադրութեամբ կայարանում երկաթուղային գնացքին սպասող օտարականը դարձաւ իր մօտով հապճեպ անցնող մէկին և խիսց նրա ուսին։

—Քիչ էր մնացել քեզ առանց միրուքի չճանաչէի —շարունակեց նա, —ի՞նչպէս է ընասնիքդ, ի՞նչպէս է քո ինո՞յ առողջութիւնը։

—Ցաւում եմ, յարդելի պարոն, որ ես ձեզ չեմ ճանաչում, —պատաժանեց միւսը —դարձեալ չեմ կարող իմ ինո՞յ առողջութեան մասին դժբախտաբար ոչինչ ասել, որովհետեւ ես գեռ ամուսնացած չեմ Բացի դրանից պիտի նկատեմ, որ իմ անունը Ռեգինալդ չէ։

—Ի՞նչ էք տուում, Ներցէք, այդ անկարելի է հաւատար

—Դուք, պարոն, սխալացնում էք ինձ իմ եղբօր հետ. իմ անունը Ռոբերտ Մաքեֆիլդ է։ Ես ու, եղբայրս շատ նման ենք իրար։

—Այդ շատ հետաքրքիր է։ Եթէ դուք միրուք ունենայիք, այդ ժամանակ խիստ դժուար կը լինէր ձեզ միմեանցից տարբերել ես բոլորովին չը զիտէի թէ Ռեգինալդը եղբայր ունի։

—Շատ ճիշտ է։ Նա իմ մասին ոչ մի ալիսարկութիւն արած չի լինիլ։ Ես՝ այսպէս ասած, «ցիմարն» եմ մեր ընտանիքի։

—Ռոբերտ թոյլ տուէք ինձ ձեզ ներկայանալու. Պառվ Գառս սէն՝ «ատելին» մեր ընտանիքի մէջ, բայց այս էլ ասեմ, որ ես չեմ կորցրել իմ յոյսերը ժամանակով այս յատկութիւնը ինձնից վերացնելու։

—Ահա, ուրեմն վիճակակից ընկեր ունեմ, այդ լաւ է, —ասաց Մաքեֆիլդը և սեղմեց ծամսօթի ձեռքը։ Բայց ասացէք

ինդրեմ, կարող էք յայսնել ինձ եղբօրս հասցէն: Ես հէնց այս բովէին եմ Նոր-Զելանդիայից կամ աւել ճիշտն ասած Պարիզից այստեղ հասել, տեղիս մի քանի ծանօթներիս այցելութիւններ անելու նպատակով:

—Ահ, եթէ չեմ սխալում, մի անգամ Ուեգինալլը պատահմամբ յիշել է, որ մի եղբայր ունի Նոր-Զելանդիայում, բայց չը գիտէր իսկապէս ձեր բնակութեան ճիշտ տեղը:

—Կարող է պատահել, ես ինձ զիտմամբ եմ ծածռուկ պահել, որպէս զի ցոյց տայի ժամանակով, թէ «Ընտանիքի յիմարն» էլ կարող է մի բան ձեռք բերել:

—Սակայն թոյլ տուէք ինձ հարցնել, ինչո՞ւ ձեղ «յիմար» են կոչում, կամ ուրիշ խօսքով՝ ինչո՞ւ դուք ընդունում էք ձեղ վրայ այդ ածականը:

—Աւելի շուտ էի սպասում այդ հարցը ձեզնից լսելու: Ես չեմ հասկանում, ես բացարձակապէս չեմ հասկանում, թէ ինչո՞ւ ինձ «յիմար» են կոչում: Եթէ մարդիկ կարողանային ինձ պարզ ցոյց տալ «յիմար» խօսքը իր իսկական իմաստով, և «յիմար» գործողութիւնները իրանց բովանդակ նշանակութեամբ, այն ժամանակ հեշտ էր, ես կը համեմատէի այդ բոլորը իմ անձնաւորութեան, իմ ամբողջ էութեան, գործունէութեան հետ, և ի մեծ միսիթարութիւն իմ, կ'իմանայի բանի բուն պատճառը: Սակաւ չեմ լսել եղբօրից և շրջապատ մարդկանցից, թէ ես «յիմար» եմ հէնց այն պատճառով, որ չեմ մտածում ու գործում միւս մարդկանց պէս: Օրինակ՝ ինձ նախատում են թէ ինչո՞ւ համբերատար, աւելի քան ներողամիտ, խաղաղասէր, գրեթէ միշտ զիջանող եմ անկարողներին, տիարներին. ինչո՞ւ յաձախ այցելում եմ Լոնդոնի խուլ անկիւնները, խօսակցում աղքատների, օրուայ հացի կարօտ չքաւորների, հիւանդ, ուժապառ բանուորների հետ և աշխատանքիս մեծ մասը բաժանում նրանց մէջ: —«Յիմար» ես, այն «յիմար» բառի բուն նշանակութեամբ, երբ չես հասկանում գարու ողին, անձնական ապահովութեան և հանգիստ ապրելու մեծ ինդիբը: —Այս խօսքերով պարսաւում էին բոլոր իմ քայլեր զիտողները, երբ ես Լոնդոնում, իմ հայրենի քաղաքումն էի ծառայում, և լուռ ու մունջ, առանց մէկին, միւսին ուշագրութիւն գարձնելու, շարունակում այդ նօրմաւ, այդ ինձ համար խիստ բնական գործը՝ աղքատ ու արհամարհուած դասակարգի հետ սերտ կապեր հաստատելով:

—Այս, այս, հիմա հասկացայ թէ բանն ինչումն է, չնորհակալ եմ, —պատասխանեց Գասսէն:

—Եւ գիտէք, յարգելի պարոն, —վրայ բերեց Ռոբերտ Մաքեֆիլը, —ես երբեմն արտնջում եմ բնութեան դէմ, որ եթէ

չէ չնորհել ինձ հանճարեղ միտք, վերաստեղծելու գերմարդկային ոյժ, զօրութիւն, գոնէ տար ինձ ճարպիկութիւն, ստախօսելու, խարամանկելու, խարդախելու, նենդամտելու կարողութիւն, ընդունակութիւն, հէնց միմիայն այն պատճառով, որ իմանալի թէ այն ժամանակ ինչ յատուկ անուն կը ստանայի շրջապատիցու կարծում եմ այն ժամանակ աւելի յարգուած կը լինէի, քան այժմ:

—Ո՞հ, անշուշտ, անկասկած! Այն ժամանակ գուք կը ստանայիք քաղաքագէտի փայլուն կոչումը: Այժմ, ներկայ շրջանում, գնահատուող ամենամեծ քաղաքագէտը պէտք է ամենայն անհրաժեշտութեամբ օժուուած լինի բացի ձեր թուած յատկութիւններից, նաև անզթութեամբ, արիւնածարաւ և վրիժառու տենչանքով! Ո՞հ, տիրել այս բոլոր յատկութիւններին և քաղաքական կամ զինուորական ծառայութեան մտնել, այն ժամանակ կարելի է վաղը գեներալ, իսկ միւս օրը ամենամեծ պալատականը գառնալ, այն ժամանակ կարելի է տէրութեան հաւաստիքը, հայրենասէր ժողովրդի խորին յարդանքը, պաշտօնական մամուլի փառարանութիւնը վայելել: Այժմ, ներկայ բուպէտմ, մեր հայրենիք Անզիան ընաւ չի ուղենալ մի երկրորդ Գլադստոն ունենալ, ո՞հ, ամեններն նա ամենայն փափազով կ'ուզենայ ունենալ մի միջնադարեան արիւնուշտ հերսո, զինուած քաղաքագիտութեան նորագոյն զինքերով, որպէս զի կարողանար տէրութեան պատճառած ներկայ մեծ հանդոյցը լուծել, և ամբողջ աշխարհի առաջ ի փառս Անզիայի մի նոր, ծաղկափունջ պսակ հիւսէր, ցօղուած բուրերի արիւնով! Եւ այն ժամանակ, պարոն Մաքեֆիլդ, կը մոռացուի Գլադստոնի անունը ժողովրդական աշխարհից և լոկ պատմական մի անուն կը դառնայ:

Հէնց այդ բուպէին նայեց նա գէպի ներքեւ և տեսաւ, որ գալիս է արդէն այն զնացքը, որով ինքը պիտի զնար, այդ պատճառով նա պատրաստուեց հեռանալ իր ծանօթից:

—Ախ, ներեցէք, պարոն, տաք խօսակցութիւնը մոռացրեց ձեզ եղբօրս հասցէն յայտնելու: Բացի այդ, կարծեմ ես ես հետաքրքրուելու բարյական պարագ ունեմ հարցնելու՝ արգեգ ինչու ձեզ «ատելի» են կոչում, կամ ուրիշ խօսքով ինչու դուք ընդունում էք ձեղ վրայ այդ ածականը:

—Շատ լաւ, այս բուպէիս, —ասաց ճանապարհորդը և զրեց հասցէն մի թղթիկի վրայ, ու տուաւ Մաքեֆիլդին: Իսկ ինչ վերաբերում է ձեր հետաքրքրութեան բաւարարութիւն տալուն, —շարունակեց նա—այդ, ներեցէք ինձ ասելու, մի երկար և խիստ հետաքրքիր պատմութիւն է, և անկարելի է այս սուղ

Ժամանակամիջոցում ձեզ հաղորդել, թողնենք մի ուրիշ անգամ, ևս շտապում եմ այժմ:

—Ներեցէք, մի հարց ես: Չեր սկզբում արած ակնարկութիւնից երեաց որ եղբայրս արդէն կին ունի, արդեօք ճիշտ է այդ:

—Ի հարկէ, մինչև անգամ մի քանի ամիս սրանից առաջ նա մի որդի ունեցաւ:

—Այս, և զիտէք արդեօք ում հետ է ամուսնացել:

—Եթէ չեմ սխալում նա պէտք է ֆենսկուրի, կամ ֆենկուրի գուստորը լինի:

—Այսինքն Ֆարկուրի, —շուտով ուղղեց Մաքեֆիլդը:

—Ճիշտ այդպէս, Ֆարկուր, Դօրա Ֆարկուր:

—Դօրա Ֆարկուր, այս,—կրկնեց Մաքեֆիլդը շեշտակի եղանակով և խկոյն գունատուեց: Մի անորոշ արտայայտութիւն ստացան նրա աչքերը:

—Ճանաչում էք նրան, մի պքանչելի, վերին աստիճանի գրաւիչ կին է, —աւելացրեց Գասաչն, —և մի անբացատրելի սէր է տածում դէպի Ռեգինալդը: Այժմ ներեցէք ինձ, ես գնում եմ, ահաւասիկ այն գնացքը, որով ես պիտի հեռանամ այստեղից: Զափաղանց ուրախ եմ, որ բախտ ունեցայ ձեզ հետ ծանօթանալու, անչուշտ կը տեսնուենք, մնաք բարեւ:

Խորերտ Մաքեֆիլդը ոչինչ չը պատասխանեց: Նա անշարժ ու անզգայ սեենեց իր աչքերը մի կէտի և խորասուզուեց մի սրտամաշ մտածմունքի մէջ: Նոր եկած գնացքից դուրս թափառող խուռան բազմութիւնը, որ նրա աջ ու ձախ կողմից հըրհելով անցնում էք, չը կարողացաւ ոչ մի բանով նրա միտքն ու ուշադրութիւնը գրաւել, մինչև որ բեռնակիր ծառաներից մէկը մօտենալով նրան, բարձր ձայնով գոչեց. «Պարսն, ինչ ունիք տանելու»:

Այն ժամանակ գարձաւ նա դէպի ծառան, և ոչինչ չը պատասխանելով, անզգալի կերպով ուղղեց իր ծանր ու դանդաղ քայլերը կրկին դէպի կայարանի շնորթիւնը:

—Այս բոլորն առաջանում է նրանից, որ մարդ ընտանիքի մէջ «յիմար» կոչման արժանանալով, կորցնում է իր ինքնավըստահութիւնը և չի համարձակում իր սիրած օրիորդին ինդրելու, որ փոքր ինչ սպասել կարողանայ, —մոտածեց նա դառնութեամբ: —Եւ արդեօք այս խկապէս մի անհասկանալի «յիմարութիւն» չէ: Այժմ, այսպիսի պայմաններում, ես չեմ ուղում այլս քաղաք մտնել, ես պէտք է խկոյն յետ գառնամ այնտեղ, որտեղից եկել եմ, ես այլս ոչինչ չունեմ այս քաղաքում: Ու

բեմն նա կին է և մայր. Ռեգինսալդի կինը... Ո՞հ, հեռանալ, հեռանալ իսկոյն այստեղից!

* *

«Մովէ» ջրափը, ուր գնալու համար հարկաւոր էր ամբողջ քսան բոպէ, լիքն էր խուռան բազմութեամբ:

Մի բարձրահասակ, ածիլած հարթ երեսով, կնճռոտ գէմքով մարդ, հազած պաշտօնական համազգեստ, մի ձեռքին վերաբկուն, միւսով բունած մի փոքրիկ արկղ, ծանր ու մտախոն քայլում էր ափի վրայ. Հէնց որ նա տեսաւ իր մօտով անցնող մարդուն, մի քննական հայեացք ձգեց նրա վրայ և իսկոյն մօտեցաւ նրան:

—Ներեցէք ինձ յարգելի պարոն, կարող եմ մի բոոլէ ձեզ հետ խօսել:

Ճանապարհորդը նայեց օտարականին ապչալից հայեացքով, և գլուխը շարժելով մի ինչ-որ բան մրմնջաց:

—Ոչ այստեղ, պարոն, սա մի մասնաւոր գործ է, ուրեմն արժէ մի քանի քայլ հեռանալ աստեղից:

Մի փոքր անդած, ճանապարհորդը տեսաւ որ արդէն այն շողենաւը, որով ինքը պիտի գնար, անդից շարժուեց և ճանապարհ ընկաւ:

—Ռեգինսալդ Մաքեֆիլդ,—շեշտեց օտարականը պաշտօնական տոնով—ես՝ խուզարկող ոստիկան Մորիցս, ձերբակալում եմ ձեզ, որպէս հայրենիքի դաւաճանի, որպէս պատերազմի դաշտից փախած երկչոտ սարկի:

—Դուք սխալում էք, ես նա չեմ, որին դուք որոշ նում էք:

—Պահ, ինայեցէք ձեր ջանքը, և ի զուր մի ուրանաք, ես շատ լաւ եմ ճանաչում ձեր դէմքը, և չը նայելով որ ածիլած է ձեր միրուքը և փոխած ձեր պաշտօնական համազգեստը, այնուամենայնիւ ես իսկոյն ճանաչեցի:

Ճանապարհորդը պահ մի կանգ տոսաւ. և րոպէական լոռութեամբ կարծես ականջ դրեց իր խճի ձայնին:

—Թերեւ ի զուր կը լինէր բանը երկար ձգձել. դուք, ինչպէս երեսում է, ոչ մի կերպ չեք ուզում հաւատալ իմ բացատրութեան, —ասաց նա—բայց այնուամենայնիւ այստեղ մի ինչ որ սխալ բան կայ:

—Ետա գեղեցիկ, յարգելի պարոն, ձեր տուած ցուցմունքներից կը պարզուի ամեն բան. սակայն պարտք եմ համարում ձեր ուշադրութիւնը այն բանի վրայ դարձնել, որ ձեր ուրա-

ցութիւնը խիստ կը դժուարացնէ գործը: Խոստովանեցէք անկեղծօրէն, որ ձեր անունը Մաքեֆիլդ է:

— Իմ անունը Մաքեֆիլդ է, — ասաց ճանապարհորդը ժըպտախառն դէմքով:

* *

— Ասացէք տեսնեմ, ի՞նչպէս եղաւ այդ. նա բացարձակ խոստովանում է իր ովլ լինելը, — հարցրեց ոստիկանապետ Սկոտլանդ-Հարդը ոստիկան Մօրիցին:

— Սկզբում նա չէր ուզում խոստովանել, ինչ որ ուզում էի ես նրանից իմանալ: Սակայն երբ ինդիքը պնդեցի, այն ժամանակ նա գունասունեց, լուս խորասուզուեց մաքի մէջ և պարզ խոստովանելով իր անունը, հետևեց ինձ առանց մի բառ արտասանելու, դիմագրութեան մի ամենափոքրիկ նշան ցոյց տալու: Ամբողջ կեանքումս առաջին անգամն է, որ տեսնում եմ մի այսպիսի համեստ, հեզ, խոնարի յանցապարտ, այն աստիճան, որ ակրամայ մարդու գութ է շարժում: Եւ միւս կողմից հասկանալի է, որ այդ տեսակ երկչուները կարող են միայն զինուորականի անունը արատաւորել և ուրիշ ոչինչ: Ի՞նչ օգուտ Անդլիային այդպիսի թուլամորթ օֆիցիեներից:

Ապա փոքր ժամանակ անցնելուց յետոյ, դատի է կանչւում Մաքեֆիլդը և եռակի յանցանք բարդում նրա վրայ այն մեծ պատասխանատւութեան առաջ, որ ինքը իր փոքրիկ վաշտով, կռուի ամենալիրիտիկական րոպէին, փախուստի է դիմել: Նա հանգիստ ու անխոռվ էր, առանց մազաչափ շփոթուելու, և բոլոր հարցումներին նա ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ մեղմ տոնով արտասանում էր. «Ես մեղաւոր չեմ»: Քննութիւնից յետոյ, անմեղ զօհ Ռոբերտ Մաքեֆիլդը, դատապարտուած ծանր յանցանքի, կրկին լուս ու մունջ, առանց որ և է արտունջի, ներս խոթուեց բանափ խուցը:

Բանտարկուելուց երեք օր անցած, յանկարծ բանտապահ ծառաներից մէկը յայտնում է Մաքեֆիլդին, թէ մի ինչ-որ կին յանկանում է իր հետ քիչ խօսել: Փոքր անցած, նրա առաջ կանգնում է իր եղբայր Ռեգինալդի կինը: Նա հագել էր ոտից մինչև զլուխ սև շորեր, վարդագոյն դէմքը ծածկել սև քօլով, որի մանր ծակոտիներից կարելի էր նշմարել երիտասարդ կնոջ դէմքի վրայ հեղահամբոյր պարկեշտութիւն, ամբողջ հոգին վառող, հուրհատող սէր, բայց միենոյն ժամանակ վրդովուած, կսկծալի վիճակ:

Նրանք մի րոպէ լուս ու մունջ նայեցին միմեանց:

Նոյեմբեր, 1901.

—Դուք չեկը սպասում ինձ այստեղ և այս վիճակում գտնել, —նկատեց Ռոբերտ Մաքեֆիլդը. —հաւանօրէն մնր ընտառիքը ինձ բոլորովին մոռացած կը լինի:

—Ո՞հ, ոչ, —յարեց երիտասարդ կինը —լուրը ինձ հասնելուց անմիջապէս հասկացայ, որ այդ անակնկալ վտանգին ենթարկուողը դուք էք, որովհետև Ռեգինալդը արդէն հեռացած է քաղաքից:

ՀԵռացած:

—Այս, հէնց որ լսեց թէ ձերբակալութեան հրաման է արձակուած իր դէմ, անյապաղ թողեց կոնդոնը:

Վերջին խօսքերը արտասանեց նա խիստ ցածր ձայնով:

—Այդ դէպքում ուրեմն նա չի կարող իր վրայ բարդուած մեղադրանքը մաքրել, նարաւորութիւն չի ունենալ իր պաշտամութեան մասին հոգալ:

—Ոչ, —փոխսաց կինը, —նա հաղորդել է ինձ ամեն բան, նախ քան հեռանալը. ազատութեան ոչ մի միջոց չը կայ:

—Բայց ինչպէս է պատահել այդ դժբախտութիւնը, Ո՞րտեղից և ինչ պատճառով է նա փախուստի դիմել Արդեօք իրաւացի է կառավարութեան վարմունքը:

—Ա՛խ, այդ նկարագիրը սարսափելի է, —ասաց երիտասարդ կինը: —Ես այստեղ ամբողջ անցքը ձեզ հաղորդել անկարող եմ, միայն ասեմ որ Ռեգինալդի, որպէս օֆիցէրի ցոյց տուած անսերելի պարտազանցութեան մէջ մեղաւոր եմ ես ինքա այնքան, որքան և ինքը Ռեգինալդը: Այս, Ռեգինալդը քաջ է, անգամ ահարկու և խիստ հայրենասէր, քիչ չեմ կարդացել լրագրներում նրա տարած յաղթութիւնների մասին գովասանէների: Սակայն այն սէրը, այն անզուգական, աննման սէրը, որ փոխադարձաբար տածում ենք իրար, մատնեց Ռեգինալդին տխուր և անփառունակ վիճակի, երբ կալքենֆէլի արիւնահեղ ճակասամարտում, ուր մնր հայրենիքը անասելի կորուստ ունեցաւ, նա մահուան երկիրվից ստիպուած, որ բռպէ առ բռպէ սպառնում էր նրան անդունդ գըլորել, կամ աւելի ճիշտն ասած՝ իմ միրոյ պատճառով փախուստի զիմեց, որի հետևանմաքը եղաւ մեր գնդերի շփոթութիւնը և բուրերի սարսափելի կոտորածը: Ա՛խ, Ռեգինալդին չի կարելի մեղադրել, գեռ երկու ամիս հաղիւ էր անցել մեր ամուսնութիւնից, երբ մեզ բաժանեցին միմնանցից երանի թէ ես ևս այնտեղ լինէի և երկուսս միասին զէնքերը ձեռքներիս զոհուէինք հայրենիքի պատուին, որով զոնէ այսօր այս անտանելի նախատինքին չէինք արժանանալ, և միւս կողմից մենք կատարած կը լինէինք մեր բարոյական պարագը:

— Ուրեմն, յարգելի դուստրդ ֆարկուրի, — յարեց Ռոբերտ Մաքեֆիլը երգիծարանական տոնով, — եթէ ձեր սէրը մէջտեղ չը լինէր, եղբայրս՝ չորհիւ իր քաջադործութեան և հայրենաւսիրական վառ խանդին, անդմօրէն, ներեցէք ինձ այսպէս աւելու, անմեղ արիւն կը թափէր, և վաղը միւս օրը կ'արժանանար զինուորական մեծ կոչման, փառքի ու պատուի: Դուք ես, ինչպէս ասացիք, հակառակ կանացի սեռի թուլութեան, հրաշը ներ կը գործէիք բուրերի դէմ, զոյզով կը զոհուէիք հայրենիքի պատուին: Յարգելի դուստրդ ֆարկուրի, — շարունակեց նա հեղինակաւոր և ինքնավստահ ոճով, — ասացէք ինդրեմ, ով չէ հայրենասէր այս գարում, ով ուրիշն ըարձր կը դասէ իր հայրենիքից, ազգից և եթէ ուզում էք տէրութիւնից, ում երակներում չի եռալ հայրենասիրական վառ զգացում, կոռելու, զոհուելու տենչանք, եթէ ինդիրը յայտարարուած լինի յանուն ազատութեան», եթէ անակնկալ դէպքերը վտանգ, կորուստ սպառնային ազգի, ազատ հայրենիքի դոյութեան: Այն ժամանակը հաւատայած եղէք, որ Ռեգինալդները երբէք չէին փախչիլ պատերազմի դաշտից, ուր նրանք քշում են այժմ ակամայ, այն ժամանակ ամուսնական սէրերը տեղի կը տային տեղի բարձր՝ իր կուլու տենչանք, եթէ ինդիրը յայտարարուած լինի հայրենիքի դիրութեան սուրբ սիրոյ, և վերջապէս այն ժամանակ նոյն իսկ ինձ նման «յիմարները» մի-մի հերոս կը դառնային և կրակ կը տեղային թշնամու բանակի վրայ, իսկ այժմ, ներկայ դէպքում, մեր հայրենիքի կոիւը այդ տեսակին չէ պատկանում: Անդիման չի ուզում ազատուել, այլ ազատութիւն խորտակել, նրան ոչ ոք վտանգ չի սպառնում, այլ ինքն է վըտանգում, կորստի մատնում ուրիշն: Եւ այս բոլորից յետոյ, թող զարմանալիք չը թուայ, եթէ ասեմ, որ Անդիայի զինուորը զոհուում է ներկայ պարագայում ոչ թէ յանուն հայրենիքի պատուի ու փառքի, այլ Անդիայի աշխարհ գրաւող ընչափացութեան, նրա հրէական շահամիրութեան: Մենք մահկանացուներս յարգելի դուստրդ ֆարկուրի, պէտք է նաև մարդասիրական զգացումներ ունենանք: Մենք չը պէտք է բնաւ ուրանանք արդարութիւնը, ճշմարտութիւնը, եթէ նոյն իսկ դա ըստ երեսութին ընդդէմ է մեր հայրենիքի շահերին: Մենք, ինչպէս և ամբողջ աշխարհը, երբէք չենք կարող չը խոստովանել բուրերի արդար վարմունքը, չը ծափահարել նրանց ակնյայտնի քաջադործութիւնը և չը մաղթել յաղթութիւն նրանց զէնքին: — Ինչու — կը հարցնէք: — Մի վախենաք, ես հայրենիքի դաւաճան չեմ. — Հէնց այն պատճառով, որ նրանց գրօշակը փողփողում է յանուն սուրբ անկախութեան, ազատութեան, հասարակական-քաղաքացիական ինքնուրոյնութեան, ահա թէ ինչու: Եւ հէնց այդ ինքնա-

բուղիս շարժառիթն է միակ պատճառը որ ահով ու սարսափով յետ են նահանջում անզլիական լնգչօնները բուրերի փոքրիկ արիասիրտ խմբերից, այդ սուրբ զգացումն է պատճառը, որ բուրերի կինն ու օրիորդը զի՞նքը ձեռքներին անինայ գետինն են տապալում մեր եղբայրակիցներին, Մաղթենք, յարգելի գուստրդ Ֆարկուրի, բուրերին յաջողութիւն մինչև վերջ, եթէ ճշմարտասէր ու արդարադատ ենք, եթէ բարեկամ ենք ընկ-ճուածին ու հալածուածին իսկ մեր հայրենիքը, հակայ Անգ-լիան, մի փախենաք, նա չի կորչի, միայն բարոյական ապտակ ուտելուց և ահագին կորուս ունենալուց յետոյ, վերջապէս յուսահատուած դաշնագիր կ'առաջարկէ: Եւ այն ժամանակ «կեց-ցեն» բուրերը, կեցցէ հասարակապետութիւնը», կը գոչէ համայն աշխարհը:

Որբերտ Մաքեֆիլդի այս ձիգ մենախօսութիւնից յետոյ բաւական ժամանակ լուսվիւն տիրեց նրանց մէջ: Վերջապէս երիտասարդ կինը խօսքը փոխելով՝ հարցրեց նրան.

—Իսկ դուք, ասացէք ինդրեւմ, այդ ինչ պատահեց ես լսել եմ ձեր մասին, որ դուք գտնւում էք աշխարհի միւս ծայ-րում, այդ բնչպէս եղաւ որ ձեր եղրօր փոխարէն դուք կալա-նաւորուեցիք, —հարցրեց երիտասարդ կինը յաւակցական եղա-նակով: —Ես բացառապէս դրա համար եմ եկել, ինդրում եմ բացատրեցէք ինձ:

—Ինչպէս կեանքում շատ շատերը, որով մեզ ճանաչում են, ինձ և եղբօրս զբեթէ միշտ իրար հետ սիամեցնում են՝ մէկին տեսնելուց միւսն են կարծում, նոյն կերպ խարուեց և ոստիկանութիւնը, ինձ Ռորերտ Մաքեֆիլդիս Ռեգինալդ Մա-քեֆիլդ կարծելով: Ես վերջին ժամանակ գործով Պարիզ էի, եկայ Լոնդոն մի քանի այցելութիւններ անելու, սակայն հազիւ Լոնդոնի կայարանը հասած, ինչ-ինչ պարագաներ փոխեցին մտադրութիւնս և ես վճռեցի իսկոյն յետ դառնար: Հազնեալ քայլերով «Մովէ» ջրափը համնելով, շտապեցի չոգննաւ նստել, բայց յանկարծ մի բարձրահասակ ոստիկան առանձնացնելով ինձ, իսկոյն կալանաւորեց:

—Բայց ինչու տեղի տուիք, ինչու չը հասկացրիք նրան ձեր ով լինելը:

—Առաջին՝ որովհետեւ նա չէր հաւատալ ինձ, երկրորդ՝ ո-րովհետեւ այդ միջացով իմ եղբայր Ռեգինալդին վտանգի կ'ենթարկէի և երրորդ՝ ով գիտէ, դուցէ առաջացել է այս անտար-բերութիւնից:

—Ուրեմն դուք յօժարակամ բանտ էք նստել, որպէս զի ձեր եղբօրը վտանգից ազատէք:

— Այն, բայց մի մոռանաք, որ իմ եղբայրը միւնոյն ժամանակ ձեր ամուսինն է,

Այս խօսքերի վրայ երիտասարդ կինը ցնցուեց ամբողջ մարմնով նա դարձրեց իր հայեացքը գէպի բանտարկեալը և կարդաց նրա աշքերում անցած կեանքի, ուրախ ժամերի մի լիարուսն հիւսուածք, ծածկուած մթագին շղարշով:

— Սակայն ինչ էք ուզում անել, — հարցրեց կինը տխուր ձայնով, ընկճուած սրտով:

— Այդ ձեղնից է կախուած, Դօրա, — թոյլ տուէք ինձ ձեզ այսպէս կոչելու, որպէս իմ եղբօր կին, կարծեմ իրաւունք կը տաք ինձ:

— Օ՛, ոչ միայն իբրև իմ ամուսնու եղբայր... Զեր արած բարութիւնը Ծեգինալդի և ինձ համար ոչ ոք, բայց արձակաւպէս ոչ ոք չէր անիլ:

— Ես սիրով պատրաստ եմ ամին բան անել, միայն թէ ձեզ փորձանքից աղատ պահել, և կարծում եմ ոյժ ունեմ իմ մէջ այդ անհելու: Ոստիկանական վարչութիւնը համոզուած է առ այժմ, որ ես իրանց որոնածն եմ՝ Ծեգինալդ Մաքեֆիլը, մինչդեռ նա այժմ կոնդրնից հեռու է և ապահով. սակայն ինչ էք կրածում, այդ երկար չի տիիր, Մանրամասն քննութիւնից յետոյ կարող է բոլորովին ինձնից անկախ պատճառներով ճշմարտութիւնը յայտնուել, ուրեմն և կարող են նրան հետեւ և բռնել:

— Ես գիտեմ, օ, ես այդ գիտեմ:

— Նրա ձերբակալութիւնը, Դօրա, անշուշտ ձեզ և ձեր որդուն վասնգի կ'ենթարկէ: Իսկ ինձ ոչ մի բան չի խանգարում. Ես մին-ունենակ եմ, և իմ բանտարկութիւնը ոչ կ'ոչող, ոչ որդու, ոչ ընկերոջ և ոչ այլ մէկին վնաս չի պատճառում:

— Ի՞նչ էք ուզում ասել դրանով, — հարցրեց Դօրա Ֆարկուրը, արտասուալից աշքերը նրան ուղղելով:

— Որ ես ձեզ դարձեալ սիրում եմ, և անգամ աւելի, քան առաջ:

— Ինչպէս, դուք ինձ... ինչպէս...

— Որ ես Անգլիան թողել եմ, որպէս զի մի ուրիշ երկրում պաշտօն ու կարողութիւն վաստակելով, ձեզ ձեռք բերել կարողանամ: Եւ այժմ, թէ իմ կարողութիւնը դեռ ևս շատ մեծ չէ, սակայն բոլորովին ապահովուած են իմ պաշտօնական բոլոր յարաբերութիւնները: Իսկ այժմ, ինչպէս տեսնում էք, ես արդէն բանտի մէջ եմ, իմ եղբօր փօխարէն, նրա պատիմը ըստ երեսութիւն ես պիտի կրեմ: Սակայն, կրկնում եմ, Դօրա, նրա ծպտեալ գրութիւնը կարող է յայտնուել, որքան էլ հեռու պահէ

իրան շրջաններից։ Այժմ՝ գնացէք դուք ձեր որդու հետ նրա մօտ իրան այս բոլորը հասկացրէք։ Ապա բոլորդ միասին գնացէք Նոր Զելանդիա, այնտեղ կարող է եզրայրս իմ պաշտօնը վարել։ Ինչպէս ես այստեղ իրան եմ վարում։ Պաշտօնակիցներս և այլ բոլոր ծանօթներս նոյն կերպ և գեռ աւելի հեշտ կարող են եղորս ինձ տեղ կարծել, ինչպէս խարուեց տեղիս սսափիկանութեան խուզարկող աչքը։ Նրան ոչ մէկը ոչինչ գծուարութիւն չի կարող պատճառել և այդպիսով գոնէ կը վայելէք իմ աշխատանքի պտուղները. իսկ իմ բոլոր ձգառւմները, իմ Դօրա, բոլոր իմ ուսկի, հոգեմաշ երազները, որ ունենում էի միայն և միմիայն ձեր պատճառով, չեն կորչի լիսպին—մասսամբ կ'իրականանան։

—Անկարելի է, այդ ես չեմ կարող Խիստ ծանր և անսանելի է այդ պատասխանատութիւնը՝ ուրիշի վաստակ վայելը։

—Դուք հրաժարում էք ձեր թանկագին ամուսնուն, ձեր սիրելի որդու հօրն ազատել։ Ուրեմն դուք ուզում էք թէ նրան և թէ ձեզ ընդմիշտ կորստեան մատնել։

—Ա՛խ, ինչպէս կարող եմ ձեզ—ձեզ, որ այս բոսպէին պատկերացաւ ինձ որպէս ամենաազնիւր բոլոր մարդկանցից, թոյլ տալ մի այդօրինակ զոհարերութիւն անելու Ո՛հ, պարոն Մաքեֆիլդ, իմ կանացի թոյլ ու քնքոյց սիրաը բողոքում է զրադէմ։

—Հաւատողւմ էք դուք, որ այս զոհարերութիւնը—եթէ թոյլ տանք մի բոսպէ այդպէս անուանելու—կարող է ինձ իսպառ դժբախտացնել։ Թէ այս ինքն ըստ ինքեան ինձ համար երազած սիրոյ վարձարութիւն չէ, սակայն և այնպէս այս կատարուում է ի պատիւ ձեր—բացառապէս ձեզ համար, իմ Դօրա, ձեզ համար, ձեր ապահովութեան և բարօր կեանքի համար ես պատրաստ եմ ամեն ինչ անել։ Այդ պատճառով հոգու ամենայն հանգստութեամբ համաձայնուեցէք ասածիս հետ և հէնց վաղը հեռացէք Ասզլիայից։ Այլ ես աւելորդ է ձեզ երկար մնալ այս տեղ, ուր երկինքը խռովել է ձեզնից։

—Օ՛, իմ Ռոբերտ, ինչպէս կարող էք մի այդ օրինակ անլուր ու հազուագիւտ փրկանք առաջարկել՝ իմ «հսասիրութեան» բաւականութիւն տալու համար եւ արդեօք ինչպէս կարող եմ ես այդ ազնիւ, անզնահատելի ընծան ընդունել և դրանով իմ ամուսնու և որդու համար պատասխանատութեան տակ ձգել դժբախտիս։ Ո՛հ, սարսափելի իրականութիւն։

—Համաձայնուեցէք, իմ Դօրա, և գնացէք առանց որ և է այլեայլութեան։ Հանգստանքները արգելում են ձեզ հայրենի

երկրում մնալ ձեր սիրած վայրերում ապրել, կամայ-ակամայ պէտք է հնազանդուէք, Գնացէք մի նոր հայրենիք, կարողութիւն և հիմովին ապահովուած ապագան սպասում են ձեզ ովկանոսի միւս կողմում Հայրենիք ու կարողութիւն, որ բառիս իսկական նշանակութեամբ ձեր ստացուածքը, ձեր սեփականութիւնը կը դառնան, առանց որևէ գժուարութեան, որովհետեւ այդ բոլորը ձեզ, Դօրա, միայն ձեզ համար են ձեռք բերուած ամենայն խնայողութեամբ: Մնացէք այնտեղ, մինչև որ իմ մասին որեւէ բան կը լսէք: Աստուած օրհնէ ձեզ:

—Թաղ Աստուծոյ օրհնութիւնն ու կարող ձեռքը ընդմիշտ հովանի լինի ձեզ, ազնիւ, անկեղծ Ռոբերտ, —ասաց երիտասարդ կինը և արտասուաթոր աշքերով համբուրեց ազատակամ բանտարկեալի ձեռքը:

Դանդաղ քայլերով մօտեցաւ Դօրան դէպի դուռը, և ապա իսկոյն և արագ յետ դառնալով մրմնջաց հետեւեալ խօսքերը.

«Այս էլ Ռեգինալդի և իմ որդու փոխարէն», ասաց և ամենայն արագութեամբ քաշելով երեսի սև քօլը, ի նշան բուռն երախտագիտութեամուսին մի խանդավառ համբոյր զրոշմեց Ռոբերտի փայլուն ճակատին: —Իսկ ինչ վերաբերում է ինձ, միմիայն ինձ, իմ չնորհակալութիւնը միայն կեանքիս վախճանով կ'արտայայտուի», —ասաց նա հեկեկալով, և լալահառաչ դուրս գնաց:

Գերմ. *) թարգմ. Բ. Իշեսնեան

*) Բնագիրը անդիերէն է: